ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Մանկավարժություն և հոգեբանություն
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ. Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _10_

«_27_» _նոյեմբեր_ 2023_ թ.

ՄՀ/ բ-143 Մանկավարժական արժեբանություն

_____ **ԴԱՍԸՆԹԱՑԻ**
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ __011301.00.6 **Ընդհանուր մանկավարժություն** _
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ _011301.01.6 **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա**_____
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ __**մանկավարժության և հոգեբանության**_____
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա_____
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ __**4-րդ կուրս 1-ին կիսամյակ**_____
հեռակա _____

Դասախոս(ներ) ՝
__**Լ,Ս,Միրաբյան**_____
/անուն, ազգանուն/

էլ.
հասցե/ներ____**lusinedproc@mail.ru**_____

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները ....
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ....
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ....
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ....
8. Դասավանդման մեթոդներ..... ...
9. Ուսումնառության մեթոդները ....
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ....
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ ...
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ....
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում..... ...
14. Գնահատում..... ...
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում..... ...
    14.2. Հարցաշար..... ...
    14.3. Գնահատման չափանիշներ..... ...
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ..... ...

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Դասընթացի դերը ֆ տեղը կրթական ծրագրում[1].

Մանկավարժական արժեբանություն դասընթացը տեսական մանկավարժության տրամաբանական շարունակությունն է և սերտորեն կապված է նրա հետ: Կրթության զարգացման կարևոր միտումներից մեկն այսօր անցումն է արժեքային հարացույցի: Այդ անցումը պայմանավորված է այն իննովացիոն գործընթացներով, որոնք վերջին տասնամյակներին տեղի ունեցան հետխորհրդային տարածքում, ինչպես նաև կրթության՝ որպես համապիտանի և համամարդկային արժեքի, նկատմամբ ամբողջական պատկերացում ձևավորելու անհրաժեշտությամբ:

Կրթության հետագա զարգացման համար արժեքային կողմնորոշիչներ բացահայտելու համար անհրաժեշտ է համակարգված արժեբանական գիտելիք: Այդ տեսակետից մանկավարժագիտության մեջ բավականաչափ մեծ քանակությամբ արժեբանական գաղափարներ են կուտակվել:

Սոցիալական փիլիսոփայությունը, իբրև հասարակական համակարգի իմացություն,, իր մեջ բովանդակում է նրա ուսումնասիրության ինչպես արժեքային մոտեցումն ու մեթոդաբանությունը, այնպես էլ արժեքային ճանաչողությունը: Այսպիսի ըմբռնմամբ արժեքների մասին փիլիսոփայական ուսմունքը կոչվում է արժեքաբանություն (աքսիոլոգիա՝ հուն. axios -արժեք և logos- ուսմունք):

Արժեք հասկացության նման ըմբռնումը հիմք է հանդիսացել նորկանտականներ Վ. Վինդելբանդի և Դ. Ռիկերտի արժեքաբանության տեսության մշակման համար: Նրանք ստեղծել են արժեքների տեսությունը և այն դիտարկել որպես գիտության փիլիսոփայության հիմքերից մեկը: Փիլիսոփայության խնդիրն է ճանաչել և հասկանալ համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, որպես նորմեր:

Արժեքների էությունը նրանց նշանակալիության (նշանակության, իմաստի) մեջ է: Արժեքները կապված են նպատակների և կյանքի միջոցով դրանց նպատակային իրականացման հետ:

Արժեքաբանությունը ձևավորվել է այն դարաշրջանում, երբ արժեքներ հասկացությանը տրվել է փիլիսոփայական բովանդակություն: Այն առաջին անգամ ձևակերպվել է Գերմանիայում XIX դարի 60-ական թվականներից Գ. Լոտցեի

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

աշխատություններում, իսկ ավելի ուշ՝ նորկանտականության բաղենյան դպրոցում: Լոտցեն առաջին անգամ սահմանազատել է *երևույթների* աշխարհը *արժեքների* աշխարհից: Արժեքների աշխարհը *,նպատակների թագավորությունն է:* Գլխավորը Լոտցեի մոտ հարցադրման փիլիսոփայական մոտեցումն ու մակարդակն է, օբյեկտիվ և սուբյեկտիվ արժեքների տարբերակումը և դրանց փոխհարաբերության առանձահատկությունների ընդգծումը արժեքների մեջ:

Մանկավարժական արժեբանության շնորհիվ թե՛ արևմտյան և թե՛ հայկական ազգային կրթության մեջ կուտակված ավանդական հումանիստական արժեքները լիարժեք օգտագործվում են կրթության արդիականացման նպատակներով:

Որպես ընդհանուր արժեբանության, կրթության փիլիսոփայության, մարդաբանության, մշակութաբանության բարոյագիտության, տրամաբանության, հոգեբանության ու մանկավարժական ինտեգրացման արդյունք՝ մանկավարժական արժեբանությունը հանդիսանում է նոր կրթական քաղաքականության ձևավորման և իրացման գլխավոր պայման: Նրա ռազմավարական կողմնորոշիչները հիմնված են հումանիստական արժեքների վրա:

Մանկավարժական արժեբանության հիմքում ընկած է մարդկային կյանքի գիտակցման և հաստատման, դաստիարակության, ուսուցման, մանկավարժական գործունեության և ամբողջությամբ վերցրած կրթության արժեքները, և քանի որ մանկավարժական արժեբանությունը սերտորեն կապված է տեսական մանկավարժության հետ:

Արժեքների փիլիսոփայությունը XX դարում սրընթաց զարգացում է ապրում: Հրատարակվում են բազմաթիվ մենագրություններ արժեքների էության, դասակարգման, պրակտիկ-արժեքային և տեսական-իմացաբանական կողմերի մասին: Այսօր շրջանառության մեջ են արժեքների էության և հասկացության մասին տարբեր տեսակետներ: Մասնավորապես, արժեքները դիտարկվում են որպես իրեր, որոնք օժտված են օգտակարության հատկությամբ և կոչված են բավարարելու մարդու խելամիտ որևէ պահանջմունք: Մի այլ տեսակետից, արժեքները իդեալներ են, նորմեր են կամ թե՝ մարդու կյանքի համար ինչ-որ դրական նշանակություն ունենալու երևույթ, իրադարձություն: Իրենց տարբերությամբ հնադերձ, այս ըմբռնումները ֆիքսում են արժեքների որևէ էական կողմը, լրացնում են մեկը մյուսին:

Արժեքների փիլիսոփայական բովանդակությունը հասկանալու համար անհրաժեշտ է սահմանել մի շարք հարակից հասկացություններ, որոնք նախդրում են արժեք հասկացությանը և օգնում՝ սահմանելու այն:

Արժեքները չեն ձևավորվում մարդուց անկախ, ինքնին, դրանք որպես այդպիսին, բնության և հասարակական երևույթներ չեն, այլ մարդկանց հարաբերությունների համակարգ են: Աշխարհի իրերը և մարդկանց կողմից ստեղծված երկրորդ բնությունը ,առարկայական արժեքներ են դառնում միմիայն նրանց հետ հարաբերվելիս և այն էլ միայն այն դեպքում, երբ օգտակար են մարդու համար և բավարարում են նրա բանական պահանջմունքները: Արժեքների երկրորդ խումբը հոգևոր արժեքներն են՝ հասարակական նորմերի տեսք ստացած մարդկանց հոգևոր դիրքորոշումները, պահանջները, գնահատականները, սափմանափակումները և կրոնական, բարոյական ու գեղագիտական իդեալները: Այստեղից էլ արժեքների ըմբռնման հիմքում ընկած է մարդու արժեքային հարաբերությունների աշխարհի նկատմամբ՝ ,առարկայականե և ,սոբյեկտիվե արժեքների նկատմամբ: Աշխարհը և նրա իրերը արժեք են, եթե կա որոշակի հետաքրքրություն դրանց նկատմամբ: Այդ հետաքրքրությունների հիմքի վրա են ծագում շահերը, որոնք ոչ միայն պայմանավորում են մարդու հետաքրքրությունը ինչ-որ բանի նկատմամբ, այլև ուղղություն են տալիս մարդու գործունեությանը և կոնկրետացնում արժեք-պահանջմունքի բավարարում հարաբերության հակասական իմաստը: Արժեքը մի օբյեկտ է, որը օժտված է արժեքային բովանդակությամբ միայն այն դեպքում, երբ նրա նկատմամբ դրսևորվում է ինչ-որ շահ:

Արժեքները իրենց բնույթով սոցիալական են: Որպես այդպիսին, արժեքները արտահայտում են մարդու գոյության եղանակը: Տարբեր դարաշրջաններ ունեն իրենց արժեքների համակարգը, իսկ յուրաքանչյուր անհատ՝ իրենը: Մի դարաշրջանի արժեքները կարող են կորցնել իրենց իմաստն ու արժեքային բովանդակությունը մյուսի համար: Նունիսկ այս կամ այն արժեքը կարող է արժեք լինել մեկի համար և այդպիսին չլինել մյուսի համար: Այս պատճառով էլ արժեքները ունեն կոնկրետ-պատմական բնույթ:

1.
2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

Դասընթացի նպատակը՝ ուսանողների մեջ ձևավորել արժեքային աշխարհընկալում հասկանալու համար կյանքի երևույթների բարոյագիտական կողմը և տալու այդ երևույթների մեկնաբանությունը: Արժեքային մոտեցման դիրքերից գնահատել կրթամշակութային արժեքները, մասնավորապես կրթությունը որպես համամարդկային

արժեք և մեկնաբանել մանկավարժական արժեբանության տեղն ու դերը ընդհանուր արժեբանության մեջ:

2.1.

Դասընթացի խնդիրները՝

- յուրացնել արժեքի էությունը, ընդհանուր արժեբանության մեջ նրա աստիճանական զարգացման միտումները,
- գաղափար կազմել մանկավարժական արժեբանության մեթոդաբանական մոտեցումների մասին,
- պատկերացում կազմել մանկավարժական արժեբանության ձևավորման ու զարգացման գործոնների մասին,
- գաղափար կազմել մանկավարժական արժեբանության էության բովանդակության հիմնական հասկացությունների՝ արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի արժեքային կողմնորոշումների մասին,
- կրթության ու նրա արժեբանական գործառույթների մասին,
- ուսուցչի մանկավարժական արժեքային համակարգի մասին,
- ձևավորել գիտականորեն հիմնավորված չափանիշներ. արժեքային գիտակցության, արժեքային հարաբերության, արժեքային կողմորոշման վերաբերյալ:

2.2.

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

. Գիտելիքների և կարողությունների մակարդակը, որոնք ուսանողը պետք է ունենա տվյալ դասընթացը ***ուսումնասիրելու համար.***

- ✓ կարողություններ և հմտություններ,
- ✓ փիլիսոփայության ակունքները թափանցելու խոր և հաստատուն գիտելիքներ, մանկավարժական արժեբանության հիմունքներին

Դասընթացը ձյավորում է հետյյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] **յ. Դասընթացի** ***ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաների (այսուհետ ԱԿ) ձևավորմանը***

Առաջին շրջափուլի ծրագրերում առարկայական(մասնագիտական) կոմպետենցիաներն ավելի ընդհանուր բնույթ են կրում: Ընդհանուր առմամաբ առաջին շրջափուլի ծրագրերի ավարտին ուսանողը (շրջանավարտը) պիտի կարողանա.

1 դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,

2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,

4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

5 հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,

6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

7 ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,

8 հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները:

Երկրորդ շրջափուլի ծրագրերը առանձնանում են ընդգծված մասնագիտացմամբ: Այստեղ շրջանավարտները պետք է ունակ լինեն ինքնուրույն կատարելու գիտական հետազոտություններ:

Երկրորդ շրջափուլի ուսուցման արդյունքներն ընդհանուր առմամաբ ենթադրում են, որ շրջանավարտները պետք է.

9 դրսևորեն ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),

10 քննադատորեն գնահատեն և մեկնաբանեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,

11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

12 ունակ լինել ուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

13 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս,

14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

1. հանձնառություն սովորողների առաջադիմության և ձեռքբերումների նկատմամբ,
2. ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները ուսումնասիրելու, ներդնելու կարողություն,
3. խորհրդատվական կարողություն,
4. առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն,
5. ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն,
6. ժամանակը արդյունավետ օգտագործելու հմտություն,
7. սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն,
8. մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում,
9. համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն,

4.

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	4 կրեդիտ, 120 ժամ	4 կրեդիտ, 120 ժամ

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	30	8
Գործնական աշխատանք	20	
Սեմինար պարապմունք		8
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	70	104
Ընդամենը	120	120

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ստուգարք	

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- <u>Հարցազրույց</u> – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր….

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Ներածություն	1				
2.	Մանկավարժական արժեբանության տեսամեթոդաբանական հիմունքները	1				
3,	Մանկավարժական արժեբանության տեսամեթոդաբանական հիմունքները					
4,	Արժեքային պատկերացումների և գաղափարների զարգացումը որպես ընդհանուր պատմական գործընթաց:	1				
5,	Արժեքային պատկերացումների և գաղափարների զարգացումը որպես ընդհանուր պատմական գործընթաց:	1				
6,	Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության տարբեր շրջաններում	1				
7,	Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության տարբեր շրջաններում	1				
8,	Մանկավարժական արժեբանության հետազոտության մեթոդաբանական մոտեցումները	1				
9,	Մանկավարժական արժեբանության հետազոտության մեթոդաբանական մոտեցումները					
10,	Մանկավարժական արժեբանության ձևավորման ու զարգացման գործոնները	1				
11,	Մանկավարժական արժեբանության ձևավորման ու զարգացման գործոնները					

[8] Նման է օրացուցային պլանին

	12, Մանկավարժական արժեբանության էությունը և բովանդակությունը 13Մանկավարժական արժեբանության էությունը և բովանդակությունը					
ԸՆԴԱՄԵՆԸ		8		8		

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Երևան, 2004թ.	
2.	Թորգոմյան Լ.Վ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան 2005թ.	
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Բարոյագիտական բառարան, Երևան, 1985թ., ,Արժեբանություն, արժեքներե	
2.	Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975թ., ,Արժեբանություն, արժեքներե	
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	https://cyberleninka.ru/article/n/aksiologicheskiy-podhod-v-pedagogike **Аксиологический подход в педагогике**	
2.	https://studopedia.su/15_2315_pedagogicheskaya-aksiologiya.html **Педагогическая аксиология**	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[9]
1.				
2.				

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.					
2.					

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[11]
1.					

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2.					

12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

Հ/Հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[12]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[13]
1.						
2.						
3.						

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[14]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Ինտերնետի առկայությամբ
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	ՍՄԱՐԹ գրատախտակ
Սարքեր, սարքավորումներ	
Համակարգչային ծրագրեր	
Այլ	Բաշխիչ նյութեր

[12] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[13] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[14] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[15]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության

---

[15]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[16]

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1.
2.
3…….

Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)

(1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի -------շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված թեմաները.**
  1.
  2.
  3…….

- **Ընդգրկված հարցեր.**
  1.
  2.
  3…….

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

(2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի-------շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**

  1.
  2.
  3…….

- **Ընդգրկված հարցեր.**
  1.
  2.
  3…….

14.4. Գնահատման չափանիշները[17].

- Տեսական գիտելիքները……:
- Գործնական աշխատանքները……:
- Սեմինար պարապմունքները……:
- Լաբորատոր աշխատանքները….:
- Ինքնուրույն աշխատանքը….:

---

[16] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

[17] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ __011301.00.6 **Ընդհանուր մանկավարժություն** _
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ _011301.01.6 **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՄՀ/ բ-143 Մանկավարժական արժեբանություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	16	Դասախոսություն	8
			Սեմինար	8
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	104		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	**Դասընթացի նպատակը՝** ուսանողների մեջ ձևավորել արժեքային աշխարհընկալում հասկանալու համար կյանքի երևույթների բարոյագիտական կողմը և տալու այդ երևույթների մեկնաբանությունը: Արժեքային մոտեցման դիրքերից գնահատել կրթամշակութային արժեքները, մասնավորապես կրթությունը որպես համամարդկային արժեք և մեկնաբանել մանկավարժական արժեբանության տեղն ու դերը ընդհանուր արժեբանության մեջ:			
Դասընթացի վերջնարդյունքները	**<u>Դասընթացի *ուսուցման վերջնարդյունքը*</u>** <u>Դասընթացի *ուսուցման արդյունքում ուսանողը պետք է **իմանա.***</u> ✓ մանկավարժական արժեբանության տեսական ասպեկտները ✓ մանկավարժական արժեբանության մեթոդաբանական հիմունքները ✓ արժեքի գաղափարը և նրա զարգացումը ընդհանուր արժեբանության մեջ կրթական արժեքների աստիճանակարգը (հիերարխիան)<u>. Դասընթացի</u>			

	*<u>ուսուցման արդյունքում ուսանողը պետք է **կարողանա.**</u>* ✓ բացահայտել մանկավարժական արժեբանության հիմնական հասկացությունները ✓ բացահայտել արժեքային գիտակցության և վարքագծի իմաստը ✓ որոշել ուսանողների արժեքային կողմնորոշման ուղղվածությունը՝ օգտագործելով դասընթացի մեթոդական զինանոցը դրսևորել արժեքային հարաբերություն շրջապատող աշխարհի նկատմամբ. <u>Դասընթացի *ուսուցման արդյունքում ուսանողը պետք է **տիրապետի.***</u> ✓ մանկավարժական արժեբանության հիմունքներին ✓ մանկավարժական արժեբանության հետազոտության մեթոդսաբանական մոտեցումներին ✓ արժեքային աշխարհընկալմանը մանկավարժական համակարգի առարկաների համակարգված գիտելիքների և ստեղծագործական կարողությունների
Դասընթացի բովանդակությունը	ԹԵՄԱ 1. Ներածություն ԹԵՄԱ 2. Մանկավարժական արժեբանության տեսամեթոդաբանական հիմունքները: ➢ Մանկավարժական արժեբանությունը որպես փիլիսոփայական ուսմունք արժեքների մասին: Արժեքի գաղափարը և նրա զարգացումը ընդհանուր արժեբանության մեջ: Արժեք հասկացության բնութագրումը փիլիսոփայության տեսանկյունից: ➢ Արժեբանական հայեցակարգերի հիմնական տեսակները՝ օբյեկտիվ իդեալիստական, սուբյեկտիվ իդեալիստական, նատուրալիստական, սոցիոլոգիական, դիալեկտիկական-մատերիալիստական: ԹԵՄԱ 3. Արժեքային պատկերացումների և գաղափարների զարգացումը որպես ընդհանուր պատմական գործընթաց: ✓ Արժեբանության գաղափարները անտիկ և միջնադարյան փիլիսոփայության մեջ, հասարակական և կրթական արժեքների փոխադարձ կապը Պլատոնի փիլիսոփայական համակարգում: Արժեքի գաղափարը Արիստոտելի փիլիսոփայական համակարգում: Վերածննդի դարաշրջանի արժեքային գերակայություններ, մարդը որպես հումանիստական դարաշրջանի առաջնային արժեք: ✓ Արժեքի գաղափարը արևմտաեվրոպական փիլիսոփայության մտքի պատմության մեջ (Թ. Հոբս, Դ. Յում, Կանտ, Հեգել և ուրիշներ):

	Հիմնական արժեքանության հիմնախնդիրները և դրանց զարգացումը արևմտյան մանկավարժական մտքի պատմության մեջ (Յ.Ա. Կոմենսկի, Ժ.Ժ. Ռուսո, Ի.Հ. Պեստալոցցի, Հերբարտ, Ա. Դիստերվերգ): ԹԵՄԱ 4. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության տարբեր շրջաններում ✓ Արժեքանության ընդհանուր օրինաչափությունների աշխարհընկալումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի զարգացման մեջ (Մ.Մաշտոց, Մ.Խորենացի, Դ. Անհաղթ, Ե. Կողբացի, Ա. Շիրակացի, Տաթևացի, Խ. Աբովյան): ✓ Հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության շրջանների տարբերիչ գծերը և արժեքային հիմնավորումները Հայաստանի կրթության զարգացման տարբեր աստիճաններում: ԹԵՄԱ 5. Մանկավարժական արժեքանության հետազոտության մեթոդաբանական մոտեցումները ✓ Գիտական մոտեցում արժեքային դասակարգումների նկատմամբ: Կրթության փիլիսոփայությունը որպես գիտելիքների ոլորտ, որը բացահայտում է կրթության արժեքաիմաստային կողմը, նրա զարգացման օրինաչափությունները: Կոլումբիայի համալսարանի գիտական կենտրոնի դերը կրթության փիլիսոփայության հիմնախնդիրների լուծման գործում: Պիտերսի գիտական տեսությունը կրթության չափորոշիչների մասին: ✓ Կրթության փիլիսոփայության մանկավարժական հայեցակարգերը: Վ.Ս. Բիբլերի մշակույթների երկխոսության դպրոցը: ✓ Իմացության նկատմամբ գործունային մոտեցում Գ.Պ. Շչեդրովիցկու համակարգում, զարգացնող ուսումնական գաղափարները, Վ.Վ. Դավիդովի, Լ.Վ. Զանկովի մանկավարժական համակարգերում, պրոբլեմային ուսուցման հարցերը Ի.Յա. Լերների, հայ մանկավարժներ Բալյանի, Ամիրջանյանի մանկավարժական երկերում: ԹԵՄԱ 6. Մանկավարժական արժեքանության ձևավորման ու

	զարգացման գործոնները ✓ Համաշխարհային և հայ ազգային կրթական դաշտի արժևորումը: Մանկավարժական արժեբանության զարգացումը որպես գիտելիքների միջառարկայական ոլորտ 20-րդ դարի 80-ական թթ. կրթության փիլիսոփայության շրջանակներում: ✓ Անցումը վարչահրամայականից՝ հումանիստական կրթական հարացույցի: Կրթության մարդասիրացման հիմնախնդիրները, նրա կողմնորոշումը դեպի անձնավորությունը և նրա զարգացումը: ԹԵՄԱ 7. Մանկավարժական արժեբանության էությունը և բովանդակությունը ✓ Գաղափար մանկավարժական արժեբանության մասին: Մանկավարժական արժեբանության տրամաբանական-կառուցվածքային սկզբունքները: ✓ Մանկավարժական արժեբանության հիմնական հասկացությունները՝ արժեքային գիտակցություն, արժեքային հարաբերություն, արժեքային դիրքորոշում, արժեքային կողմնորոշում, արժեքային վարքագիծ: Կրթությունը և նրա արժեբանական գործառույթը: ✓
Գնահատման մեթոդները և չափանիշները	• Տեսական գիտելիքներ • Գործնական աշխատանքները • Սեմինար պարապմունքներ • Ինքնուրույն աշխատանք ✓
Գրականությունն	Պարտադիր- Պարտադիր- Պարտադիր գրականություն **1) Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Երևան, 2004թ.** **2) Թորգոմյան Լ.Վ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան 2005թ.** **3) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածնունդի դարաշրջանի հայ մշակույթում ,Մանկավարժությունե ամսագիր, թիվ 3,**

2010թ.
4) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության մեջ, ,Մանկավարժություն ամսագիր, թիվ 5-6, 2009թ.
5) Իովչուկ Մ.Տ. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979թ.
6) Կանկե Վ. Փիլիսոփայություն, Երևան, 2000թ.
7) Հակոբյան Ս. Փիլիսոփայության դասընթաց, Երևան, 2005թ.
8) **Сластенин В.А. Педагогическая аксиология, М., 1995г.**
9) **Сластенин В.А., Чижакова Г.И. Введение в педагогическую аксиологию, М., 2003г.**
10) Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Երևան, 2004թ.
11) Թորգոմյան Լ.Վ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան 2005թ.
12) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածննդի դարաշրջանի հայ մշակույթում ,Մանկավարժություն ամսագիր, թիվ 3, 2010թ.
13) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Երևան, 2004թ.
14) Թորգոմյան Լ.Վ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան 2005թ.
15) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածննդի դարաշրջանի հայ մշակույթում ,Մանկավարժություն ամսագիր, թիվ 3, 2010թ.
16) Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի պատմության մեջ, ,Մանկավարժություն ամսագիր, թիվ 5-6, 2009թ.
17) Իովչուկ Մ.Տ. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979թ.
18) Կանկե Վ. Փիլիսոփայություն, Երևան, 2000թ.
19) Հակոբյան Ս. Փիլիսոփայության դասընթաց, Երևան, 2005թ.
20) **Сластенин В.А. Педагогическая аксиология, М., 1995г.**
21) **Сластенин В.А., Чижакова Г.И. Введение в педагогическую аксиологию, М., 2003г.**